ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2025թ. **N ____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ «ԷՆՋԼՍ ՀԱՈՒՋ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Գ. Զոհրապի փողոցի հ.124/3 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 4634.56 մակերեսով /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.11072025-01-0191 վկայական/ հողամասը Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Հ. Աճառյան փողոցի հ.57/1 հասցեում, տարածագնահատման 8-րդ գոտում գտնվող 28000քմ մակերեսով հողամասից՝ 8100քմ մակերեսով հողամասի /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.20082021-01-0215 վկայական/ հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկվող նախագծով նախատեսվում է «ԷՆՋԼՍ ՀԱՈՒԶ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Գ. Զոհրապի փողոցի հ.124/3 հասցեում գտնվող 4634.56քմ մակերեսով /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 11072025-01-0191 վկայական/ հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Հ. Աճառյան փողոցի հ.57/1 հասցեում գտնվող 28000քմ մակերեսով հողատարածքից՝ 8100քմ մակերեսով հողամասի /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.20082021-01-0215 վկայական/ հետ:

Գ. Զոհրապի փողոցի հ.124/3 հասցեում գտնվող «ԷՆՋԼՍ ՀԱՈՒԶ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասում տարբեր ժամանակահատվածներում իրականացվել են հողարկավորություններ և ներկայումս այն ծանրաբեռնված է գերեզմաններով, ինչի հետևանքով հնարավոր չէ հողամասն օգտագործել նշանակությանը համապատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 1-ին կետի 1-ին ենթակետը, անհրաժեշտություն է առաջացել կատարել հողամասերի փոխանակում՝ Գ. Զոհրապի փողոցի հ.124/3 հասցեում գտնվող հողամասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Մասնագիտական որակավորում ունեցող «Ֆեռե» ՍՊԸ-ի եզրակացության համաձայն՝ Գ. Զոհրապի փողոցի հ.124/3 և Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Հ. Աճառյան փողոցի հ.57/1 հասցեներում գտնվող հողամասերի շուկայական արժեքները կազմում են համապատասխանաբար 787.875.200 /յոթ հարյուն ութսունյոթ միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար երկու հարյուր/ և 708.750.000 /յոթ հարյուր ութ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

«ԷՆՋԼՍ ՀԱՈՒԶ» ՍՊԸ-ն անկախ հողամասերի գնահատման արդյունքներից ներկայացրել է համաձայնություն առ այն, որ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասը փոխանակվի վերոհիշյալ հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 8100քմ մակերեսով հողամասի հետ:

Փոխանակվող հողամասը ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում: ՀՀ կառավարության 04.06.2020թ. հ.1023 որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ հողամասերն ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում են համապատասխանաբար 7-րդ և 8-րդ գոտիներում:

Համաձայն հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ

հաստատված կարգի 32–րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ